

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՌՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2017 թ. մայիսի 6-ի թիվ 60 որոշմամբ



ՌԵԿՏՈՐ

Ա.Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

**Հայ-Ռուսական համալսարանի
մագիստրոսի կրթական ծրագրերով հայկական բաժանմունքի
2017-2018 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգ**

Սույն կանոնակարգը սահմանում է Հայ-Ռուսական համալսարանի (այսուհետ՝ ՀՌՀ) մագիստրոսի կրթական ծրագրերով հայկական բաժանմունքի 2017-2018 ուսումնական տարվա վճարովի (ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքով) առկա և հեռակա ուսուցման ընդունելության կարգը:

ՀՌՀ մագիստրատուրայում ուսամնառությունն իրականացվում է հայոց լեզվով (ըստ ՀՀ և ՀՌՀ չափորոշիչների)՝ ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ: Առկա ուսուցման տևողությունը սահմանվում է 2 տարի, հեռակայինը՝ 2 տարի 6 ամիս:

ՀՌՀ-ի մագիստրատուրայի շրջանավարտներին հանձնվում է ՀՀ պետական նմուշի դիպլոմ:

ՀՌՀ մագիստրատուրայի **առկա** ուսուցման ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների մագիստրոսական ծրագրերով՝

- **061101.00.7 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**
 - 061101.02.7 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
 - 061101.05.7 Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում
- **011401.00.07 Մասնագիտական մանկավարժություն**
 - 011401.04.7 Ֆիզիկա
- **031101.00.6 Տնտեսագիտություն**
 - 031101.04.7 Միջազգային տնտեսական հարաբերություններ
 - 031101.15.7 Տնտեսության պետական կարգավորում
 - 031101.17.7 Համաշխարհային տնտեսագիտություն
 - 031101.18.7 Տվյալների վերլուծություն (Big Data Analysis)
- **041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում**
 - 041101.02.7 Հաշվապահական հաշվառում և աուդիտ
- **041201.00.7 Ֆինանսներ**

- 041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
- 041201.02.7 Ապահովագրական գործ
- **041301.00.7 Կառավարում**
 - 041301.01.7 Կառավարում
 - 041301.03.7 Պետական և մունիցիպալ կառավարում
 - 041301.11.7 Զբոսաշրջության կառավարում
 - 041301.13.7 Նախագծերի կառավարում
- **041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)**
 - 041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)
- **101501.00.7 Զբոսաշրջություն**
 - 101501.01.7 Զբոսաշրջություն
- **042101.00.7 Իրավագիտություն**
 - 042101.02.7 Սահմանադրական իրավունք, պետություն և իրավունքի տեսություն
 - 042101.03.7 Քաղաքացիական իրավունք և դատավարություն
 - 042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն
 - 042101.05.7 Գործարարական իրավունք
 - 042101.07.7 Միջազգային և եվրոպական իրավունք
- **031201.00.7 Քաղաքագիտություն**
 - 031201.06.7 Ազգային անվտանգություն
 - 031201.09.7 Կիրառական քաղաքագիտություն
 - 031201.10.7 Քաղաքական գիտության տեսություն և մեթոդաբանություն
- **031801.00.7 Միջազգային հարաբերություններ**
 - 031801.04.7 Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն
- **071401.00.7 Լրագրություն**
 - 032101.06.7 Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն
- **071506.00.7 Սարքաշինություն և չափագիտություն**
 - 071506.01.7 Սարքաշինություն (Կենսաբժշկական ճարտարագիտություն)
- **022801.00.7 Արևելագիտություն**
 - 022801.01.7 Արաբագիտություն
 - 022801.02.7 Թյուրքագիտություն
 - 022801.03.7 Իրանագիտություն
 - 022801.04.7 Հնդկագիտություն

ՀՌՀ մագիստրատուրայի **հեռակա** ուսուցման ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների մագիստրոսական ծրագրերով`

- **031101.00.6 Տնտեսագիտություն**
 - 031101.04.7 Միջազգային տնտեսական հարաբերություններ
 - 031101.15.7 Տնտեսության պետական կարգավորում
 - 031101.17.7 Համաշխարհային տնտեսագիտություն
 - 031101.18.7 Տվյալների վերլուծություն (Big data)
- **041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում**

- 041101.02.7 Հաշվապահական հաշվառում և աուդիտ
- **041201.00.7 Ֆինանսներ**
 - 041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
 - 041201.02.7 Ապահովագրական գործ
- **041301.00.7 Կառավարում**
 - 041301.01.7 Կառավարում
 - 041301.03.7 Պետական և մունիցիպալ կառավարում
 - 041301.11.7 Զբոսաշրջության կառավարում
 - 041301.13.7 Նախագծերի կառավարում
- **041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)**
 - 041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)
- **101501.00.7 Զբոսաշրջություն**
 - 101501.01.7 Զբոսաշրջություն
- **042101.00.7 Իրավագիտություն**
 - 042101.02.7 Սահմանադրական իրավունք, պետություն և իրավունքի տեսություն
 - 042101.03.7 Քաղաքացիական իրավունք և դատավարություն
 - 042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն
 - 042101.05.7 Գործարարական իրավունք
 - 042101.07.7 Միջազգային և եվրոպական իրավունք
- **031201.00.7 Քաղաքագիտություն**
 - 031201.06.7 Ազգային անվտանգություն
 - 031201.09.7 Կիրառական քաղաքագիտություն
- **031801.00.7 Միջազգային հարաբերություններ**
 - 031801.04.7 Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն
- **071401.00.7 Լրագրություն**
 - 032101.06.7 Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն

ՀՌՀ և այլ բուհերի շրջանավարտները կարող են հավակնել մագիստրատուրայի վճարովի ուսուցման տեղերին՝ մրցութային կարգով:

ՀՌՀ շրջանավարտները առկա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար անցնում են հարցազրույց:

Այլ բուհերի շրջանավարտները առկա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար հանձնում են քննություն մասնագիտությունից և թեստային քննություն օտար լեզվից:

Առկա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են ա.թ. մայիսի 10-ից մինչև 26-ը ներառյալ 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ մագիստրատուրայի բաժնում: Ընդունելության քննություններն անցկացվում են ա.թ. հունիսի 1-ից:

Այն դիմորդների համար, ովքեր հարգելի պատճառով չեն կարողացել մասնակցել առկա ուսուցման ընդունելության մրցույթին, կազմակերպվում է լրացուցիչ ընդունելությունն ա.թ.օգոստոսի 21-ից մինչև 25-ը ներառյալ:

ՀՌՀ մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելությունը ՀՌՀ և այլ բուհերի շրջանավարտների համար իրականացվում է հարցազրույցների տեսքով մասնագիտությունից օտար լեզվից:

Հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են ա.թ. սեպտեմբերի 15-ից 28-ը ներառյալ 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մագիստրատուրայի կրթական ծրագրերով ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմողները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում (լրացվում է մագիստրատուրայի բաժնում),
- անձը հաստատող փաստաթուղթ - անձնագիր (պատճենը),
- բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմ (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, պատճենը),
- Փաստաթուղթ զինվորական ծառայության վերաբերյալ (զինհաշվառման փաստաթուղթ կամ զինվորական գրքույկ, պատճենը): Այն անձանցից, ովքեր գտնվում են զինակոչային տարիքում, փաստաթղթերն ընդունվում են այն դեպքում, եթե համապատասխան զինվորական փաստաթղթերում առկա են տարկետման իրավունքի մասին նշումներ:
- 4 գունավոր, նույնատիպ լուսանկար (3×4 չափսի):

Մագիստրատուրա դիմողները փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար վճարում են 1500 դրամ, իսկ ընդունելության քննություններին մասնակցելու համար՝ 1500-ական դրամ յուրաքանչյուր քննության (հարցազրույցի) համար, որոնք նշված են դիմումներում: Անկախ ընդունելության քննություններին մասնակցությունից և արդյունքներից՝ գանձված գումարը հետ չի վերադարձվում:

Վճարովի առկա ուսուցման համակարգ ընդունվածները հրամանագրվում են վճարովի ուսուցման ծառայությունների մասին պայմանագիրը կնքելուց և առաջին կիսամյակի համար վճարումը կատարելուց հետո: Վճարովի առկա ուսուցման ծառայությունների մասին պայմանագիրը կնքելու վերջնաժամկետն է 01.09.2017թ.

Վճարովի հեռակա ուսուցման համակարգ ընդունվածները հրամանագրվում են վճարովի ուսուցման ծառայությունների մասին պայմանագիրը կնքելուց և առաջին կիսամյակի համար վճարումը կատարելուց հետո: Վճարովի հեռակա ուսուցման ծառայությունների մասին պայմանագիրը կնքելու վերջնաժամկետն է 15.10.2017թ.